

# Հ Ա Ն Գ Է Ս Ն Կ Ա Ր Ա Գ Ր Ա Կ Ա Ն

## Կ Ո Ս Տ Ա Ն Գ Ե Ո Ւ Պ Օ Լ Ի Ս

### Է Տ Ա Ր Ա Ն Տ Ո Յ Տ Է Ա Մ Ի Չ Ի Ս Ի Տ Ա Լ Ա Յ Ի Ո Յ

(Տես շա. 1Է, 238, 289, — 1Ը, 17, 165, 274, — 1Թ, 174, 259, — Խ, 72, 161, 264),

## Տ Ա Ճ Ի Կ Ք

Հիմայ, աւստրիական նաւուն վրայ ելնելէն առաջ, որ հանդէպ կալուգայի կը ծխայ Ոսկեղջիւր մէջ, պատրաստ 'ի մեկնել 'ի Սեաւ ծով, կը մնայ ինձ համատարար առաջի գնել, իբրև պարզ ճանապարհորդ, քանի մ'ընդհանուր գիտողութիւնս, որ կը պատասխանեն հարցմանս, — Ի՞նչ բան երեցան քեզ Տաճիկք, — ինքնակամ գիտողութիւնք, ազատագոյնք յամենայն նկատողութեց ներկայ պատահարաց, և հանեալք ճիշդ ինչպէս որ է իմ այն աւուրց յիշատակարաններէս: Այն հարցման, — Ի՞նչ բան երեցան քեզ Տաճիկք, — նախ առաջին կը զարթնու յիս այն սպաւուրութիւնն՝ որ Ստամպուլի արու ժողովրդեան արտաքին տեսիլն, թէ առաջին թէ վերջին օրն, ըրաւ ինձի: Չգնելով միտ նաև կերպարանաց զանազանութեան, որ և իցէ ուրիշ եւրոպական քաղաքի մը ժողովրդոց ազգող սպաւուրութենէն բոլորովին տարբեր է: Կը կարծես տեսնել ժողովուրդ մը, — չզիտեմ ինչպէս լաւագոյն կերպով բացատրել գաղափարս, — յորում՝ ամենքը մշտնջենապէս նոյն բանը մտածեն: Նոյն սպաւուրութիւնը կրնան յառաջ բերել, հարևանցի գիտող հարաւային Եւրոպիոյ բնակչի մը, հիւսիսային քաղաքացի բնակիչքն: այլ իրն շատ տարբեր է: Ասոնք իր յաասակ գործը մտածող բազմազգաղ ժողովրդեան լրջութիւնը

և ամբողջութեամբ ունին. Տաճիկք՝ հեռաւոր և անսահման բանի մը մտածող ժողովրդեան երեղիթը ունին: Ամենքն ալ հաստատուն գաղափարի մը մէջ ընկըղմեալ իմաստասէրք կ'երևին, կամ գիշերայածութիւնք, որ առանց ուր անդ ըլլալին և չորս կողմի ունեցած բաներնին գիտնալու՝ շրջագային: Ամենքն ալ ուղիղ և հեռու կը նային, իբրև մեծ հորիզոն նկատող սովորեալ մէկն, և յաչս և 'ի բերանին տխրութեան աղօտ նշանակ մ'ունին, ինչպէս ով որ սովորեալ է ինքն իրեն փակուած ապրելու: Եւ յամենեւին նոյն ծանրութիւնն, նոյն սովորութիւն չափաւորութիւնն, նոյն լեզուի, աչաց, չարժուածոց զգուշութիւնը: Ամենքն ալ տանուտեարք կ'երևին, ամենքն ալ մէկ կերպով հրահանգեալք, փաշայէն մինչև ցկրպակաւորն, և առաջատեալ տեսակ մը ազնուապետական արժանապատուութեամբ, որ առաջին նայուածքին ոչ ոք կ'իմանայ թէ ուսմիկ մ'ըլլայ 'ի Ստամպուլ, եթէ զգեստաց տարբերութիւնն չըլլայ: Գրեթէ բոլորն ալ ցուրտ երեզք են, որ բնազհոզին և զմտածութիւնը չեն մերկաւ նար: Գժուարին է դանել այն յստակ կերպարաններէն մէկն, 'ի մեզ այնպէս յաճախաւորք, որ քաղցր կամ խանգակաթ կամ անհեթեթ բարուց իբրև հայելի մ'են, որ և պատրաստ և ապա հով դատաստան մը կու տան մարդուն

մրայ: Ի նոսա ամենայն դէմք առեղ-  
 ծուած մ'է. իրենց հայեցուածն կը հար-  
 ցընէ, այլ չի պատասխաներ. իրենց  
 բերանն սրաին շարժում մ'ալ չի մատ-  
 ներ: Կարելի չէ ըսել սրչափ ծանր կու  
 գայ օտարին այս գիտաց համրականու-  
 թիւնն, այս ցրտութիւնն, այս ար-  
 ձանական կեցուածոց և սեւեռեալ հա-  
 յեցուածոց միակերպութիւնն, որ բան  
 մը չեն ըսեր: Երբեմն կամբք կը փա-  
 փագի աղաղակելու ամբոխին մէջ, —  
 և յլ անդամ մը դրուեցէք. ըսէք ո՛վ  
 էք, ինչ կը մտածէք, ինչ կը տեսնէք  
 ձեր առջևը, յօգս, այն ապտկեայ ա-  
 չգը: — Եւ իրն այնպէս օտարախորթ  
 կ'երևի, որ հագիւ թէ կը հաւատաս  
 թէ բնական ըլլայ. կը տարակուսիս  
 երբեմն, որ յարմարցուած կեղծիք մը  
 ըլլայ, կամ բարդական հիւանդու-  
 թեան մ'անցողական արգասիքն, հա-  
 սարակ կոստանդնուպօլսոյ ամենայն  
 մահմետականաց: Սակայն առաջին ան-  
 գամ աչքի կը զարնէ, այն կերպերուն  
 և շարժուածոց միակերպութեան մէջ,  
 կերպարանաց նշանաւոր զանազանու-  
 թիւնն ժողովրդեան երկու մասանց մէջ  
 ալ: Տաճկական ցեղին նախանկար դը-  
 րոյնն, որ գեղեցիկ է և հուժկու, միայն  
 ռամկին մէջ անփոփոխ մնացած է, որ  
 'ի հարկէ կամ կրօնական զգայմամբ՝  
 իրեն հարց կենաց ժուժկալութիւնը կը  
 պահէ: Ի նմա կը տեսուին նիհար և կու-  
 րովի մարմինքն, գլուխներն լաւ կազ-  
 մուած են, աչքն կենդանիք, քիթն ար-  
 ժուային, աղօրեաց ոսկերքն ցրտեալ,  
 և բովանդակ մարմնոյն ձևոց մրայ հօր  
 և համարձակ բան մը: Ընդհակառակին  
 բարձրագոյն դասու Քահիլք, յարամ  
 ապականութիւնն հնացեալ է, և օտա-  
 րախորթ արեան խառնուրդն մեծագոյն,  
 մեծաւ մասամբ մեծ զի մարմինս ունին  
 թող գիրութեամբ մը, փքր զլուխս,  
 ցած ճակատս, առանց կրակի աչկունս:  
 Եւ այս նիւթական տարբերութեան կը  
 համապատասխանէ ոչ ինչ նուազ մեծ  
 կամ թերևս մեծագոյն բարոյական  
 տարբերութիւն, որ է՝ ընդ մէջ ճշմա-  
 րիտ, անկեղծ, հին տաճկին, և այն

երկղիմի, անգոյն և անհամ էակին, որ  
 նորաձևութեան տաճիկն կը կոչուի՝ Ե-  
 ղաձն: Ուստի մեծ դժուարութիւն մը  
 յառաջ կու գայ քննելու զայն՝ որ ընդ-  
 հանուր կերպով տաճիկ ժողովուրդ կը  
 կոչուի. վասն զի անոր այն մասին հետ,  
 որ աղգային տիպը անվթար պահէր է,  
 կամ խառնուելու եղանակ չկայ կամ  
 միաբանելու կողմ չկայ. և միւս մասն,  
 ընդ որում առևտրոյ և զննողութեան  
 դիրութիւն կայ, չիներկայացըններ հա-  
 ւատարմութեամբ ոչ բարբը և ոչ աղ-  
 գին գաղափարքը: Քայց ոչ ապականու-  
 թիւնն և ոչ եւրոպական քաղաքակա-  
 նութեան նոր գոյնն՝ բարձրագոյն դա-  
 սու տաճիկներէն վերուց գեռ այն չգի-  
 տեմ ինչպիսի խստութիւնն և անորոշ  
 տիրութիւնն, որ ռամկին մէջ կը տես-  
 նուի, որ և, յանհատս չմտածելով, այլ  
 յընդհանրականութեան ժողովրդեան,  
 աներկբայապէս նպաստաւոր տպաւո-  
 րութիւն մը յառաջ կը զերէ: Յիրաւի,  
 արտաքին տեսլենէն գառելով, կոս-  
 տանդնուպօլսոյ տաճկական ժողովուր-  
 դըն եւրոպիոյ ամենէն կրթեալ և հա-  
 մետաբոյնն կ'երևի: Չի պատահիր եր-  
 բք, և ոչ իսկ Ստամպուլի ամայագոյն  
 փողոցաց մէջ, որ օտար մը նախատուի-  
 մարթ է այցելել մկկթաց, նաև աղօ-  
 թից ժամանակ, շատ աւելի աներկիտ-  
 նութեամբ մեծարեալ ըլլալու, քան զոր  
 չի կրնոր ունենալ մեր եկեղեցեաց այ-  
 ցելութիւն ընող տաճիկ մը. ամբոխին  
 մէջ, չեմ ըսեր լիրբ, բայց և ոչ խիստ  
 հետաքրքիր հայեցուածոց մը կը հան-  
 դիպիս երբեք. հագիւ երբեք կուիք, հա-  
 գիւ երբք ռամիկն, որ ճամբուն մէջ  
 աղմուկ յարուցանէ. դրանց, պատու-  
 հանոց, խառնութից մէջ կանանց ձայն  
 չկայ. յայտնի անառակութեան երևոյթ  
 չկայ, անպատկառ դարձ չկայ. ոչ ինչ  
 նուազ մկկթէն՝ չուկայն մեծարոյ է. ա-  
 մեն տեղ շարժուածոց և խօսից մեծ  
 խնայողութիւն մը. ոչ երգք, ոչ բար-  
 ձրաձայն ծիծաղ, ոչ զոսհիկ կանչիւնք,  
 ոչ անյից խափանարար տաղակալի ա-  
 կումբք. երես, ձևք և ստք մաքուր-  
 սակաւ ցնցոսիք, քիչ անգամ աղտե-

ղիք . ոչ երբեք դռնհիկը , և ընդհանուր  
և փոխադարձ մեծարանաց ցոյց մ'է բռ-  
լոր ընկերական դասուց մէջ : Բայց . . .

Արդէն ըսի որ աւստրիական նաւ մը  
կայ , որ կը ծխայ հանդէպ կալադայի  
Ռակեղլեր մէջ , պատրաստ 'ի մեկնել 'ի  
Սեաւ ծով . և ընթերցողն գիտէ թէ ուս-  
տի պիտի անցնի այս նաւս :

### ՎՈՍՓՈՐ

Հազիւ ելանք 'ի նաւ , տեսանք որ կը  
տարածուէր կոստանդնուպօլսոյ վրայ  
իրև գորշագոյն քօղ մը , և այս քօղոյս  
վրայ կ'ամբառնային Մորաւիոյ և Մա-  
ճառաստանի լերինք , և ստորին Աւստրիոյ  
Ալպեանք : Արագածեպ փոփոխութիւն  
մ'է տեսարանի , որ միշտ կը տեսնուի՝  
երբ նաւու մը վրայ կ'ենենք՝ յորում ար-  
դէն երթալու երկրիդ երեսք կը հանդի-  
պին և բարբառոյ հնչմունք կը լսուին :  
Գերմանական դիմաց պարունակի մը մէջ  
բանտուեցանք , որ ժամանակէն առաջ  
մեզ հիւսիսային ցուրտը և տաղտուկը  
զգալ տուաւ : Թողուցին զմեզ մեր բա-  
րեկամքն . այլ ուրիշ բան չենք տեսներ՝  
բայց երեք սպիտակ թաշկինակ՝ որ կը  
ժածանին բացակայ մակուկի մը վրայ ,  
սեաւ նաւակայ երթեկի մը մէջ , հան-  
դէպ մարտտան : Ճիշդ այն տեղն ենք՝  
յորում մեր հասնելուն օրը սիկիլեան  
նաւս կանգ առաւ : Անյայնի գեղեցիկ  
իրիկուն մ'է , մեծապայծառ և ամօքա-  
խառն : Երբեք այսպէս գեղածիծաղ և  
այսպէս մեծ չերևեցաւ մեզ կոստանդ-  
նուպօլիս : Վերջին անգամ կը ջանանք  
սեեռելու 'ի միտս մեր իւր անբաւ շրջա-  
պատուածիւնը և իւր կախարհեալ քա-  
ղաքի չքնաղ գոյիքը . և վերջին անգամ  
այն զարմանալանչ Ռակեղլեր խորը  
կ'արձըկինք զհայեցուած , որ քանի մը  
վայրկենէն յաւիտեան պիտի ծածկի 'ի

մէնջ : Անյայտ եղեր են սպիտակ թաշ-  
կինակք , նաև կը խլրտի : Թուի թէ ա-  
մենայն ինչ կը տեղափոխի : Իսկիւտար  
յառաջ կու գայ , Ստամպօլ յետոս կը  
նահանջի , կալադայ իր վրայ կը հորովի ,  
իրև մեր երթը տեսնելու համար : Ող-  
ջոյն Ռակեղլեր : Նաւուն ճօճում մը կը  
յափշտակէ 'ի մէնջ զԳասըմ-Փաշա ,  
ուրիշ ճօճում մը 'ի բաց կը տանի զԷ-  
յուպ , ուրիշ մը՝ Ստամպօլի վեցերորդ  
բլուրը . աներևոյթ կ'ըլլայ հինգերորդն ,  
կը թաքչի չորրորդն , անհետ կ'ըլլայ եր-  
րորդն , կը չքանայ երկրորդն . կը մնայ  
միայն Պալատան բլուրն , որ , գահութիւն  
երկնից , երկար ժամանակ զմեզ պիտի  
չթողու : Արդէն ճիշդ վտարորի մէջ տե-  
ղէն կը նաւարկէինք , արագապէս : Կ'ան-  
ցնի Թուի-հանէի թաղն , կ'անցնի Ճըն-  
տըզլի թաղն . Տօլմա-Պահէի պալա-  
տան սպիտակափայլ և քանդակածոյ  
ճակատքն կը սլանան . և վերջին ան-  
գամ կը տարածէ Իսկիւտար իւր պար-  
տիզօք և ամարաստուն ապարանօք  
ժածկուած բլրոց ամփիթատորնը : Ող-  
ջոյն քեզ , կոստանդնուպօլիս , սիրելի  
և անեղբ քաղաք , իմ մանկութեանս  
երազն , իմ երիտասարդութեանս հա-  
ռաչանքն , իմ կենացս անջնջելի յիշա-  
տակն : Ողջոյն քեզ , գեղադիտակ և ան-  
մահ գշխոյ Արևելից , յամանակն թող  
փոխէ քու վիճակդ , առանց գեղեցկու-  
թեանդ դրասելու , և օր մը կարենան  
տեսնել զքեզ իմ որդիքս նոյն այն երի-  
տասարդական եռանդեան արբեցու-  
թեամբ , որով ես զքեզ տեսայ և զքեզ  
կը թողում լքանեմ :

Սակայն ողջունին տխրութիւնն քա-  
նի մը վայրկեան միայն տեսց , վասն զի  
ուրիշ կոստանդնուպօլիս մը , Ռակեղլեր  
վրայ թողուցածէս աւելի ընդարձակ ,  
աւելի գեղապանծ , աւելի զուարթագին  
առջես կը տարածուէր ընդ երկայնու-  
թիւն քանակութիւն հազար մեզրից , եր-  
կրիս կրկին գեղեցկագոյն սփանց վրայ :

1 Պէտք է ներք մեզ մեծարգոյ հեղինակս ,  
որ հօս կարեւրք իւր կարևոր գիտողութեանց

Թէն՝ միայն այն պատճառին համար՝ որ ինքն  
ալ կրնայ դուշակել :

ի ձախակողմն առաջին հանդիպեալ  
 դիւղն, Վոսփորի եւրոպական եզեր վը-  
 բայ, և Պէշիք-թաշ. տաճկական մեծ  
 գիւղ մը, կամ մանաւանդ հոստանդ-  
 նուպօսոյ մեծ արուարձան մը, որ կը  
 տարածուի բլրոյ մ'ոտքը, փոքր նաւա-  
 հանդառի մը չորս կողմը: Իր ետեւ վա-  
 յերուչ հովիտ մը կը բացուի. Բիւզան-  
 դիոնի Ստեփաննոսի դափնեաց հին  
 հովիտն, որ դէպ 'ի Բերա կը բարձրա-  
 նայ. տանց մէջ կ'ամբառնայ սօսեաց  
 խումբ մը, որ հովանի կ'ընէ հոշակա-  
 ւոր Պարպարոսաս ծովահինին գերեզ-  
 մանին վրայ. կուտեալ մարդկամբ մեծ  
 սրճարան մը կը կարկառի ջրոց վրայ,  
 զիցերու անտառէ նը վերամբարձեալ-  
 նաւահանդիստն նաւակօք և մակուկօք  
 լցեալ է. ափունքն բազմամարդ. բլուն  
 զայլարգեաց, հովիտն խոնեալ տամբ  
 և պարտզեղովք: Այլ հոստանդնուպօ-  
 լոյ արուարձանաց տեսիլն ալ չկայ:  
 Բայց ունի իրեն յատուկ շնորհք և զը-  
 ւարթութիւնը և անմուռնալի Վոսփո-  
 րի գիւղերը: Չիքն աւելի փոքրիկ են,  
 կանաչութիւնն աւելի թանձր, գոյնքն  
 աւելի յանդուգն: Է իբրև խումբ մը ծի-  
 ծաղախիտ տանց, որ ընդ մէջ երկրի և  
 ջրոյ կախուած կ'երևին, սիրահարից և  
 բանտատեղծից քաղաք մը, կրից մը կամ  
 աւիւնի մը չափ տեւելու սահմանեալ,  
 հաճոյից մը համար հօն կառուցած, ա-  
 մարան գեղեցիկ գիշերոյ մը մէջ: Դեռ  
 տակաւին հայեցուածդ հօն չսեռած,  
 արդէն այն հեռացեր է, և կ'անցնի մեր  
 առջևէն Չըրաղանի պալատն, մանա-  
 ւանդ թէ սպիտակ կիճէ պալատանց  
 գունդ մը, պարզք և հոյակապք, սեանց  
 երկայն գծիւք զարդարեալ և պսակեալ  
 խաղիտամաճ և պատշաճ, որոյ վրայ  
 Վոսփորի սպիտակ անթիւ թռչնոց կեն-  
 դանի աստամաճ և քանդակ մը կանգուն  
 կեցած է, ափանց բլրոց սաղարթախիտ  
 կանաչէն 'ի վեր երևեալք: Այլ հօս կը  
 սկսի հազար գեղեցկութեանց փախուա-  
 սը տեսնելուն սիրելի տանջանքն, այն  
 կէտին՝ որ միոյն վրայ կը զարմանաս:  
 Մինչդեռ մեկը կը նկատենք զՊէշիք-  
 թաշ և զՉըրաղան, 'ի միւս կողմանէ

ասիական ափունքն կը փախչին, որոն-  
 չելի գիւղիւք ծածկուած, որ գոհարաց  
 պէս ախորժ կը բերէին կարենալ զնե-  
 լու և 'ի բաց տանելու, կը փախչի Ղուզ-  
 դունտէրէ, ծիածանի ամենայն գունիւք  
 գեղերփնեալ, իր փոքր նաւահանդը  
 տով, ուր, կ'ըսէ աւանդութիւնն, թէ  
 Յով երինջն զՎոսփոր անցնելէն ետքը  
 ցամաք ելած ըլլայ, Հերայի գոռեխներէն  
 ազատելու համար. կ'անցնի Իսթամ-  
 բուս, իր կրկնամիտարէ չքնաղ մզկիթով.  
 կ'անհետանայ Պէշիքթայէ կայսերական  
 պալատն, իր կոնային և բրգաձև տա-  
 նեօք, և իր դեղին և դորչագոյն պա-  
 րիսպքն որ կ'ընծայեն իշխանուհեաց մե-  
 նարանի մը խորհրդաւոր և նորանշան  
 կերպարանքը. և ապա Պէշիքթայէ գեղն,  
 անդարդարձեալ 'ի ջրոց, որոյ ետևն  
 կ'ամբառնայ Պուլիուրու լեռն. և բոլոր  
 այս գեղերս, գալարագեղ փոքր բլրոց  
 ստորոտը ժողոված կամ ախուած, և  
 տերևալից անցողութեան մը մէջ ըն-  
 կըղմեալ, որ կարծես զայնս սքողել կը  
 հակի, կապեալ են ընդ միմեանս պսա-  
 կօք ամարաստուն ապարանից և տնա-  
 կաց և յերկայն կարգաց ծառատնկոց՝  
 որ տողեալ են եզերաց երկայնութիւք,  
 կամ ժամոժուռ կ'իջնեն 'ի բարձանց 'ի  
 ծով, անհամար պարտիզաց և բանջա-  
 րանոցս և փոքրիկ մտարոց մէջէն,  
 սատրնջաձև և հասփիճանաձև շինեալ,  
 և գունաւորեալ կանաչի անթիւ զու-  
 գախառնութեամբք:

Ուրեմն պէտք է զիջանիլ ամենայն  
 ինչ ափ յափոց տեսնելու, աղագար  
 աջ ու ձախ զուխը գարձունելով, ինք-  
 նաչարժ կանոնաւորութեամբ մը: Չը-  
 րաղանէն քիչ մ'անդին անցնելով, ձա-  
 խակողմը, եւրոպական ափան վրայ կը  
 տեսնուի Օրթթա-քէօյ մեծ գիւղն, ուս-  
 կից վեր վալիտէ Սուլթանին՝ մայր Ապ-  
 աիւլ-Ալիդի՝ մզկիթն կը ցուցնէ իւր  
 պաղպաղուն գմբէթը, և Բիզա-փաշայի  
 պալատն իւր օտնիքը կը ցցուէ. բլրոյ  
 մ'ոտքը, որու գագաթան վրայ, խիտ բու-  
 սոց աճման մը մէջ, Աստեղ կայսերա-  
 կան հովանոցին սպիտակերանդ և թե.

թե որմունքն կը բարձրանան: կը բնա-  
 կին յՕրթա-քէոյ բազում հայ, եւրո-  
 պացի եւ յոյն սեղանաւորք: Այն վայր-  
 կենին հօն ցամաք կը մօտենար կոս-  
 տանդնուպօլսոյ շոգենաւն: Բազմու-  
 թիւն մը դուրս կ'ենէր, ուրիշ բազմու-  
 թիւն մը նաւամասուցին վրայ կը ոպա-  
 սէր մտնէրու համար: Էին տաճիկ տիկ-  
 նայք, եւրոպացի տիկնայք, սպայք,  
 կրօնաւորք, ներքինիք, պարոպք, ֆէսք,  
 փակեղք, զլխարկիկք, կապճաճև խոյրք,  
 խառնակեալք. տեսարան մը՝ որ վոս-  
 փորի ամեն քսան կայարանաց մէջ կը  
 տեսնուի, մանաւանդ իրիկունը: Օրթա-  
 քէոյի զիմաց, ասիական եզեր վրայ, ա-  
 մարաստուն պալատանց պսակի մը մէջ,  
 կը փայլէ Չէնկէլ գիւլն, այսպէս կո-  
 չուած երկաթէ հին խարսիէ մը՝ զոր  
 Մէհէմէտ Բ այն ափանց վրայ գտաւ.  
 և 'ի թիկունս նորա կ'ամբարանայ սպի-  
 տակ հովանոցն տխուր յիշատակաց,  
 ուստի Մուրատ Գ, մուշկին նախան-  
 ձով մը վառուած, կը հրամայէր սպան-  
 նել այն զուարթ մարդիկն՝ որ երգելով  
 դաշտերէն կ'անցնէին: Վերստին գէսպ  
 յերոպա նայելով, կը գտնուինք հան-  
 դէպ Գուրու-Չէլմէի, հինն Անարլոս,  
 գեղեցիկ գիւղին եւ բարեսեփլ նաւա-  
 հանգաւին, ուր Մեղէա՝ Յասսլիի հետ  
 ցամաք ելնելով, տնկեց հոգակաւոր  
 դափնին. և գէսպ յԱսիա դառնալով,  
 կը տեսննիք Գուլէլի եւ վանի-քէոյ եր-  
 կու ծիծաղկոտ գեղերը, ծովափան եր-  
 կայնութեամբ տարածուած, ահագին  
 գինուորանոցի մը ալ և ձախ կողմը,  
 արքայական ապարանի մը նման, որ  
 ջրոյն մէջ կը ցոլանայ: Երկուք գիւղից  
 կոնակը մեծ պարտիզով մը բոլորեալ  
 բլուր մը կը բարձրանայ, յորում սպի-  
 տականիշ կ'երևի, գոգցես բոլորովին  
 'ի ծառոց ծածկեալ հովանոցն, ուր  
 Սիւլէյման Մեծն երեք տարի ապրեցաւ,  
 փոքր աշտարակի մը մէջ թաքուցեալ,  
 իւր հօրը Սէլիմի լրտեսաց և դահճաց  
 խուզարկութիւններէն ազատեղու հա-  
 մար: Մինչդեռ մենք ծառոց մէջ աշ-  
 տարակ կ'որոնենք, կ'անցնի նաւն 'ի  
 հանդիպոյ Արնաւուտ-քէոյի, գեղ Աւ-

պանիացւոց, այժմիկ բնակեալ 'ի Յու-  
 նաց, յափն եւրոպական մահկաճև  
 ասրածեալ, փոքր ծոցի մը բոլորովըր,  
 առագաստաւոր նաւուք լցեալ: Այլ ա-  
 մեն բան ինչպէս կրնայ տեսնուիլ: Գիւղ  
 մը կը գողանայ 'ի մէնջ զմիւսը, գեղե-  
 ցիկ մկրիթ մը՝ ազնուաշուք տեսարանէ  
 մը կ'անջատէ զմեզ, և մինչդեռ կը նա-  
 յիս գիւղից և նաւահանգստից, կ'անց-  
 նին վէզիլներու, փայաներու, Սուլթա-  
 նուհաց, մեծ ներքինեաց, մեծամեծ  
 տանուտերանց պալատք. դեղին, կո-  
 պոյտ, ծիրանեգոյն տունք, որ ջրոց վը-  
 րայ լուզականք կը կարծուին, բողե-  
 ղամբ և յիւններով պատեալ, ծողկա-  
 լից տամալեօք ծածկեալ, և նոճեաց,  
 սարգենեաց և նարնջենեաց անտառ-  
 կաց մէջ կէս 'ի կէս զօղեալ. կորնթա-  
 կան երեքանկիւնի ճակատմբ և ոպի-  
 տակ կուճէ դրուսգեալ սեամբք շէնք,  
 ջուղեցերական ամարոցք, ճարսնացի տը-  
 նակք, մարիտանացի փոքր ապարանք,  
 տաճիկ հովանոցք, եւսայսրիք, մին միւ-  
 սոյն վրայ կարկառեալ, որ վոսփորի  
 կապուտին վրայ կը կախնն կանանո-  
 ցաց վանդակապատ պատշգամբը, և  
 դուրս կ'երկնցընեն իրենց սանդղաճև  
 պզտի նաւամատոյցքը, և 'ի հոսանաց  
 փայտայեալ իրենց պարտիզակրք. բո-  
 լոր թեթև և առօրեայ փոքր շինուածք  
 են, որ ճիշդ իրենց բնակաց բաղդը կը  
 ներկայացընեն, ման'չամարդ աղջկան  
 մը յաղթանակը, դաղանի սիրոյ մը բա-  
 րի յաղողութիւնը, բարձր պաշտօն մը՝  
 որ վաղը պիտի կորսուի, փառք մը՝ որ  
 սքսորիւ պիտի լմննայ, ճոխութիւն մը՝  
 որ կը ցնդի, փոռաւորութիւն մը՝ որ կը  
 կործանի: Երկու ասիանց վրայ գրեթէ  
 միջոց չկայ՝ որ տամբք ծածկուած չըլ-  
 լայ: Դաշտային լայնատարած վննեա-  
 կոյ մը մեծ Ջրանցից տեսակ մ'է: Ամա-  
 րաստուն ապարանք, հովանոցք, պա-  
 լտտք կ'ամբառնան մի գլինի միւյ, այն-  
 պիտի կերպով գետեղեսաք, որ իւրա-  
 քանչիւրոց բոլոր ճակատան տեսանիլի  
 և, յետինքն՝ առաջնոց տանեաց վը-  
 րայ կանգնուած կ'երևին, և միոյն և  
 միւսոյն մէջ տեղ, և ամենէն հեռաւո-

րողայններէն անդին , ամենայն ինչ կա-  
նայ է , ամեն կողմ կը բարձրանան կաղ-  
նեաց , սօսեաց , պիծխիներու , կաղամա-  
խեաց , շճեաց , թղենեաց ծայրք և  
վարքք , յորս ոպիտակաթոյր կ'երևին  
ազբերք և կը փայլատակեն թիւրպէնե-  
րու և մենաւոր մկկիթներու զմէթիկք :

Դէպ 'ի կոստանդնուպօլիս դառնա-  
լով , դեռ խառնխուռն կը տեսնենք  
Պալատան բլուրը , և Սուրբ Սոփիայի  
ահագին զմէթը , որ պայծառ և ոսկե-  
զոծ երկնից վրայ սեւագոյն կը նշմարի :  
Մի և նոյն ժամանակ աներևոյթ կ'ըլ-  
լան Արնաուտ-քէոյ , վանի , Գուլէլի ,  
Զէնկէլ , Օրթա , և ամենայն ինչ փո-  
խուեցաւ մեր յորս կողմը : Կարծես թէ  
ընդարձակ լճի մը մէջ ենք : Յափն եւ-  
րոպական 'ի ձախակողմն փոքր խորշ մը  
կը բացուի . ուրիշ փոքր խորշ մը յա-  
ջակողմն յափն ասիական : Ձախակող-  
մնան ափան վրայ կիսաբլուրակաձև կը  
տարածուի յոյն չքնաղ քաղաքիկն Պէ-  
պէք , բարձրաձաղկ ծառովք ստուերա-  
տեալ , որոց մէջ կը կանգնի հին գեղե-  
ցիկ մղկիթ մը և Հիւմայուն-ապատի  
կայսերական հովանոցն , ուր ուրիշ ան-  
գամներն կ'ընդունէին Սուլթանք զեւ-  
րոպական դեսպանս 'ի ծածուկ ժո-  
ղովս : Քաղաքին մէկ մասն փոքր հովտի  
մը թանձր կանաչին մէջ կը սքողի . ու-  
րիշ մաս մը կը ճապաղի կաղնեօք ծած-  
կուած բլրոյ մը զառ 'ի վայրին վրայ ,  
որու կատարն անտառ մ'է հոչակաւոր  
ուժգանհնակ արձանդանդի մը հա-  
մար , որ ձիւ մը քօյլափոխին կը պա-  
տասխանէ զնդի մը ոտնաձայնով : Իբը-  
խոյ մը սիրահարցընելու շնորհաշուք և  
ծիծաղկոտ վայր մ'է . այլ կը մոռցուի ,  
հանդիպակաց կողմը դառնալով : Հօս  
Ասիոյ ամուկըն երկրաւոր դրամտի տե-  
սարան մը կ'ընծայէ : Աղեղնաձև կար-  
կառմամբ լայնանիստ սարաւանդի մը  
վրայ կը տարածուի Գանտիլլի գիւղն ,  
հովանապի գեղի մը պէս բազմագու-  
նակ , ամենասպիտակ մկկիթով մը , և ա-  
մարաստուն ապարանից խուռն շքա-  
դրով մը . որուն յետակողմը կը բար-

ձրանայ իճատէ ծաղկազուարճ բլուրն ,  
ունենլով 'ի վերոյ ատամնաձև աշտարակ  
մը , որ կը դիտէ երկուց ափանց հրդեհ-  
քը : Գանտիլլիի աշակողմը , խորշին վը-  
րայ , մին 'ի միւսոյն քիչ հեռաւորու-  
թեամբ , կը բերանանան երկու հովտք ,  
այսինքն է մեծն և փոքրն ոսկեղէն յը-  
տակին , որոց մէջ կը տարածուի Ասիոյ  
Անոյշ ջրոց բերկրապատար մարգագե-  
տինն , ծածկեալ մուլթգենեօք , կաղ-  
նեօք և սօսեօք , որուն կ'իջիւէ Ապտիւլ-  
ճէճիտի մօր մեծածոյն հովանոցն , ծը-  
րապրեալ և քանդակեալ Տօլմա-Պահ-  
ճէի պալատան ճարտարապետութեամբ  
և շրջապատեալ 'ի բարձր պարտիզաց ,  
վարդիւք կարմրացելոց : Եւ « երկնային  
մեծ վտակէն » անդին՝ դեռ կը տես-  
նուին Անատօլու-Հիսար գիւղին հա-  
զար գոյնքն , բարձունքի մը զառ 'ի վայ-  
րին վրայ տարածեալ , յորում կը կանգ-  
նին Պայազիտ-Եբլտըրմի դղեկին թե-  
թեալաց աշտարակքն , որ եւրոպա-  
կան ափան վրայ շինուած Մէհմէմէտի Բ  
դղեկին դիմացն է : Վոսփօրի բոլոր այս  
գեղեցիկ անջրպետն , այն վայրկենին լի  
էր կենդանութեամբ : Եւրոպոյ խորշին  
մէջ հարիւրաւոր մակոյիք կը վխտային .  
կ'անցնէին առագաստաւոր և շոգեշարժ  
լաստափայտք , ուղեալք 'ի նաւահան-  
գիստն Պէպէքի . տաճիկ ձկնորք՝ խա-  
չաձև դրուած ամենաբարձր գերանօք  
ջրոյն վրայ վերամբարձ իրենց օդային  
հիւղերէն ցանցերնին կը ձգէին . կոս-  
տանդնուպօլսոյ շոգեհաւ մը եւրոպա-  
կան քաղաքիկին նաւամատուցին վրայ  
յոյն տիկնանց , լազարիսդներու , ամե-  
րիկեան բողբոջական դպրոցի աշակեր-  
տաց , ծրարիւք և զգեստիւք բեռնաւո-  
րեալ ընտանեկաց ամբոխ մը կը թա-  
փէր . և հսկառակ կողմը դիտակով կը  
տեսնուէին մահմետական տիկնանց  
խուսմբ , որ Անոյշ ջրոց ծառոց տակ  
կը շրջագայէին , կամ ակմբահոյլ կը  
նստէին « երկնային վտակին » ափուն-  
քը , մինչդեռ բազմաթիւ մակոյիք և  
վարազուրակալ նաւակք , լցեալ տաճ-  
կօք և տաճկուհեօք , կ'երթային և կու-  
գային ափան երկայնութեամբ : Արկա-

դեան և սիրտտարի չդիտեմ ինչ մ'էր, որ փափագ կը շարժէր նաւէն վար նետուիլ, ըզլալով հասնիլ յիբկուց ափանց միոյն, և կանգնիլ հօն, և ըսել, — Ինչ որ կ'ուզէ բլլայ, ասիէ այլ չեմ ուզեր շարժիլ. կ'ուզեմ հօս ապրիլ և մեռնիլ, այս մահճմետական երջանկութեան մէջ:

Բոցց յանկարծ տեսարանն կը փոխուի և բոլոր այն երևակայութիւնն կը թռչին: Վստիոր մեր գիմայն ուզիլ կը տարածուի, և կ'ընծայէ Հռենոսի ազօտ պատկեր մը. բայց աշնուացուցեալ Հռենոսի մը, և միշտ նկարեալ արևելից զօրաւոր և պերճ գուներով: Չախա կողմը՝ նոճեաց և սօսեաց անտառէ մը ծածկուած գերեզմանատեղի մը կը խորտակէ ինչուան այն կէտն չընդհատած տանց գիծը. և անմիջապէս մօտիկ, Հերմաիոնի ժայռուտ փոքր լեռին ստորտը, կ'ամբռնան երեք մեծամեծ աշատրակքն Բումէլի—Հիսարի, Եւրոպիոյ դղեակն, շրջափակեալք ՚ի մնացուածոց աստամնաձև սրմոց և փոքրագոյն աշտարակաց, որ աւերակաց գեղանկար աստիճանաւ մը կ'իջնեն ինչուան ծովեզրը: Այն անուանի դղեակն է՝ զոր բարձրացուց Մէհէմէտ Բ զիստանդուպօլիս առնեցէն տարի մ'առաջ, թէպէտ և կոստանդին մեծապէս իր տհաճութիւնը ցուցուց, որուն դեպանքն, ինչպէս գիտեն ամենքը, մահու սպառնալեզր յետս առաքեցան: Եւ այն՝ հոսանաց բռնագոյն կէտն է, (անոր համար ՚ի Յունաց ք մեծ հոսանք » կոչուած և ՚ի Տրակաց՝ Սատանայի հօսանք), և նաև վոսփորի անձկագոյն միջոցն է, երկու ափունքը հինգ հարիւր մեգրէն քիչ մ'աւելի հեռու բլլալով: Հօն Մանդոկ սամոսցին ձգեց նաւակաց կամուրջն, որուն վրայէն անցան Դարնի եօթն հարիւր հազար զինուորքն, և հօն նաև կը կարծուի՝ որ անցած ըլլան առսն հազարքն՝ Սիսիայէն գառնալով: Այլ չկայ այլ հետք՝ ոչ Մանդոկի երկու Նսեանց, և ոչ Հերմաիոնի լեռին ժայռին մէջ փորուած աթոռոյն, ուս.

կից պարսիկ արքայն իր զօրաց անցից ներկայ եղեր է: Թուրք դեղ մը գաղտագողի կը ծիծաղի, զգեկին ոտքը կծկած, և ափական ափունքն միշտ աւելի գալար և աւելի զուարթ կը փախչին: Անգագար յաջորդութիւն մ'է նաւավարաց և պարտիզայանաց տանց, բուսաբերութեամբ յորդալեղ ձորակաց, մենաւոր փոքրիկ ծոցից՝ որք զողցեո ծածկուած են ափան ծառոց ամբարձուղէչ սոսերէն, որոց տակէն յուշիկ կ'անցնին ձկնորսաց սպիտակ առագաստիկք. ծաղկաբեր մարգագեղեղնք՝ որ ամենամեղմ՝ զտոխլոյրութիւն կ'իջնեն ինչուան ծովափը. պարտիզաւոր փոքր ժայռեր բաղեղամբ պատասեալ փոքր գերեզմանատեղիք՝ որ սեպացեալ բարձրաւանդակաց դադաթան վրայ սպիտականիչ կ'երևին: Յանկարծակի, նոյն ափական եզերաց վրայ՝ դուրս կ'ելնէ Գանդլճա դեղեցիկ գիւղն, բորբովին կարմրափայլ, երկու առապարին սարաւանդից վրայ կառուցեալ, որոց դէմ ալիք ահեղամուռն կը խորտակին, և զարգարեալ չընաղ մղկիծով մը, որ իր կրկին սպիտակափայլ մինարէնները հովանոցաձև նոճեաց և շոճեաց թաւաւտէ մը զուրս կը թոցընէ: Եւ հօս կը սկսին բարձրանալ պարտեզք, ըստ օրինակի արեղակնակաց, մին միւսոյն ետեը, և խտանալ ամարաստուն ապարանք, որոց մէջ կը շողշողէ այն հուշականուն Ֆուտտ—Փաշայի պալատն, զիւանադէտ և բանաստեղծ, սնապարծ, փափկաւեր և աղնուական, որ օսմաննան լուծարգինն կոչուեցաւ: Սակաւիկ մ'աւելի առաջ, եւրոպական եղբրքը, յերևան կու գայ Պալթա—Լիման ամենազուարճ գիւղն, ձորակի մը բերանը շինուած, ուստի փոքր դետ մը կ'իջնէ ՚ի նաւահանգիստն, և որուն կ'իջնէ աւարաստուն ապարանք սիւռեալ բլուր մը, որոց մէջ կ'ամբռնայ Բէշիտ—Փաշայի՝ հին պալատն. և ապա էմիր—Ղան—Օլլու—Պահհէ պղտի խորն, նոճուկք բոլորովին դալարուտ, որոց մէջ կը փայլի ձեան սպիտակութեամբ մը մենաւոր մկկիթ մը, փայտայեալ ՚ի շրոց, և

ունելով 'ի վիրոյ ոսկեղէն ճառագայթ-  
ներով ցցուած մեծ գունտ մը : Մի  
և նոյն ժամանակ նաւն կը մտնենայ  
մերթ այս մերթ այն ափունքը , և այն ա-  
տեն մեծ երկրանկարին հազար տառն-  
ձին հանգամանքն կը տեսնուին . հոս  
տաճիկ հարուստ տան մը սեւաւայլի  
անդատակն , բայցուած ծովափան վը-  
րայ , որոյ խորն՝ բազմոցի մը վրայ ըն-  
կողմանեալ կը ծխէ տան յաղթան-  
գամ հազարապետ մը . հօն ամբողջի  
մ'արտաքին սանդղոց վերջին աստի-  
ճանին վրայ արձանացած ներքինի մը ,  
որ երկու քողածածուկ տաճիկահաց  
կ'օգնէ նաւակի մը մէջ իջնելու . առեկի  
անդին թփովք ցանկեալ պարտիզակ  
մը , և սօսւով մը գրեթէ բովանդակ  
ծածկուած , որուն ոտքը՝ խոտորնակի  
զրամ սրունիք կը հանգչի սպիտակա-  
փառ մօրուզք ծեր տաճիկ մը , որ Ղու-  
լանին վրայ կը մտածէ . գիւղազբօսից  
ընտանիք տամալեաց վրայ ժողովեալք .  
այժից և ոչխարաց հօրանք՝ որ կ'արա-  
ծին բարձր մարգագետնոց վրայ . ձիա-  
ւորք՝ որ քառասմբակ կ'ընթանան ա-  
փան երկայնութեամբ , ուղտուց կարա-  
ւանք՝ որ կ'անցնին բլրոց գագաթան  
վրայէն , յատակ երկնից վրայ ստուե-  
րագրելով իրենց այլանդակ ծիրը :

Յեղակարծուց կը լայնի վոսփորոն ,  
տեսարանն կը փոխուի , նորէն երկու  
խորշից մէջ ենք , և յընդարձակ լճի  
միում : Չախակողմը նեղ և խոր խորշ  
մ'է , որու բոլորովը կը պատի յոյն քա-  
ղաքիկն Սթենեա . սրէ Սոսթենիոս , տա-  
ճարէն և թեաւոր արձանէն՝ զոր ամ  
բարձին հօն Արգոնաւորքը , 'ի պատիւ  
խնամակալու Ռզդոյն՝ որ ընդդէմ Ամի-  
կոսի՝ արքային Բէբրիկէի՝ կառոյն մէջ  
զիրեւք յաղթական հանդիսացուցեր  
էր : Թեթև կարուծեան մը միջոցիւ՝ զոր  
կը ծրագրէ նաւն զէպ յեւրոպա , որու  
շակի կրտեսները եզեր երկայնութեամբ  
սողեալ սրճարանքն և անակքն , ձի-  
թենեաց և այգեաց մէջ սփռեալ փոքր  
ամարաստուղքն , հովիտն՝ որ նաւահան  
զըստին մէջ կը բերանանայ , հեղեղա-

տիկն՝ որ բարձրութենէ մը կը գահա-  
վիծի և հոյակապ սրբաջինջ սպիտակ  
կուճէ մաւրիտանացի աղբիւրն , բար-  
ձրաձաղկ տխկիներու խմբէ մը հովա-  
նաւորեալ , յորոց կը կախուին ձկնոր-  
սաց ցանոցքն , յոյն կանանց երթմեկի  
մը մէջ , որ իրենց զլխոյն վրայ գաւեր  
կը կրեն : Հանգէպ Սթենեայի , ասիա-  
կան ափան խորշին վրայ , ծառոց մէջէն  
կ'երևի Չուպուզլու տաճիկգիւղն , ուր Ան-  
հանդատից անուանի մենտատանն կար ,  
որ դիշեր ու ցորեկ տառնց ընդհատելու  
կ'աղաթէին և կ'երգէին : Վոսփորի եր-  
կու ափունքը , մէկ ծովէն 'ի միւսն , այս  
հինգերորդ գարու խոտակոցն անապա-  
տականաց և միարանակեցուց յիշատա-  
կօք պատարուն են , որք կը թափառէին  
բլրոց վրայ , խաչիք և շղթայիք բեռ-  
նաւորեալ , խարազնովք և երկաթէ ա-  
նրօք տանջեալք , կամ եօթնեակներ և  
ամիսներ անշարժ կը կենային սեան մը  
կամ ծառի մը ծայրը , որու չորս կողմը  
կ'երթային գեանատարած բլլալու , ծո-  
մապահէլու , աղթմելու , զկուրծս ծե-  
ծելու՝ իշխանք , զինուորք , ասենակալք  
և հովիւք , օրհնութիւն մը կամ խոր-  
հուրդ մը հայցելով , իբրև Աստուծոյ  
շնորհք մը : Բայց վոսփոր սեպհական  
զօրութիւն մ'ունի , որով անընդդի-  
մադարձաբար կը խոտորեցնէ յանցե-  
լոյն զմտածութիւն ճանապարհորդին ,  
որ առաջին անգամ ընթանայ իրեն ա-  
փանց երկայնութեամբ : Ամենայն յի-  
շատակք , ամենայն մեծագոյն , գեղեց-  
կագոյն կամ տիրադին պատկերք , զոր  
այն տեղեաց պատմութիւնն կամ ա-  
ռասպելն կրնայ մատակարարել նսեմա-  
ցեալ , յաղթահարեալ , կը համարձա-  
կիմ ըսելու թաղեալ կը մնան այն հրա-  
շաղան բուսաբերութեան յորդութե-  
նէն , այն զուարթագեղ գունոց շողիւ-  
նէն , այն կենաց յղիւթենէն , այն բռ-  
լորովին ժպիտ և բարբոսիւն ուրախու-  
թիւն գեղեցիկ բնութեան հուժկու և  
պերճ առուգութենէն : Ճիգն մը պէտք  
է ընել հաւատալու համար՝ որ այն  
ջրոց , այն դիւթիջ վայելչութեանց մէջ  
կրցեր են կատաղութեամբ կուռիլ , վա-

ուիլ և արևունտիլ բուլլարայ, գոթայ, երուլայ, բիւզանդացուց, ուսասց, տաճկաց նաւատորմիզք: Նոյն իսկ դղեակք, որ կը պատկեն զբլուրս, և ոչ գաղափար մը կը զարթուցանեն այն բանատուեղծական արհաւիրաց գգացման, զոր ուրիշ տեղեաց մէջ այն ազգի աւերակք կը ներշնչեն. և յաւէտ գեղազուարճ վայրին արուեստական դարդ մը կ'երկին, քան թէ պատերազմի ստոյգ յիշատակարանք, որ օր մը մահ ժայթքած ըլլան: Ամենայն ինչ իբրև քողարկեալ իմն է լքման և քաղցրութեան գունով մը՝ որ կ'արթնցընէ միայն զուարթ մտածութիւնս և խաղաղութեան անբաւիղճ մը:

Ամենիայէն անդին դեռ կը լայնիվուփոր, և քանի մը վայրկեանէն կը հասնի նաև տեղ մը՝ ուստի կը վայելեա ինչուան այս ատեն մեր աչաց ներկայացեալ տեսարաններէն սքանչելագոյնը: Դառնալով դէպ յերոսպա, մեր առջևն ունինք Եէնի-քէօյ յոյն և հայ փոքր քաղաքիկն, այգեստանեօք և շոճեաց անտառակեր ծածկուած բարձր բլրոյ մ'ոտքը շինուած, և ժայռուտ եզեր մը վրայ աղեղնաձև կարկառմամբ տարածեալ, որուն դէմ աճեղազոյ կը խորտակի հոսանքն. և քիչ մ'աւելի անդին է ֆայէնտէր ամենագեղ խորշն, մակոյկներով լցեալ, պարտիզաւոր անակօք բլորեալ, և յորդառատ սնկոց աճմամբ մը պսակաւորեալ, որոց վրայ կայսերական հովանոցի մը օգակառոց պատըզամբ կը կ'արկառին: Յետս դառնալով, ունինք մեր առջին ասիական ափուները, որ մեծ աղեղամբ մը կը կորահայ, բլրոց, գիւղից և նաւակայնից հիւսարանչ ամբիթատրոն մը յօրինելով: Ինճիր-քէօյն է, գիւղն թզոց, պսակեալ պարտիզովք. աւերի Ինճիր-քէօյի՝ Սուլթանիէ, որ անտառի մը մէջ ծածկուած կ'երևի. յետ Սուլթանիէի՝ Պէյգօղ մեծ գեղն, պարփակեալ բանջարանոցօք և այգեստանեօք, և բարձրուղէ ընկուզենեօք ստուերատեալ, որվուփորի գեղեցկագոյն խորշին մէջ կը ցո-

լանայ, և է սա այն հին խորշն՝ ուր արքայն Բէբրիկէի պարտեցաւ ՚ի Պոլլուքսեայ, և ուր հրաշարի դավնին կար՝ որ իրեն տերևոց դպաղը կը յիմարեցընէր. և Պէյգօղէն անդին, հետու, Եալի գիւղն, հինն Ամէա, որ այլ ուրիշ բան չերկիր բայց կանաչ մեծ գորգի մը վրայ գեղին և կարմիր ծաղկանց դէպ մը: Բայց այս՝ միայն մեծ պատկերին նախագիծ մ'է: Պէյսք է երևակայել այն բլրոց աննկարագրելի կերպով շնորհայից ձևերը, որ մեր իղճը շարժէին ձեռօք գգուելու, այն անասուն անթիւ փոքրիկ գիւղերը, որ կարծես թէ նկարչի մը ձեռօք հօն դրուած են. այն ամենայն կլիմայից բուսոց զարգացումը, այն ամենայն աշխարհաց ճարտարագետութիւնքը, այն պարտիզաց տառիճանքը, այն ջրոց սահանքը, այն նսեմ ստուերքը, այն պողպաղուն մշկիթքը, այն սպիտակ առաքասաներէն պիտակ պիտակ եղած կապոյտը և այն արևու մուտքէն վարդագեղեալ երկինքը:

Բայց հօն համեմելով, նաև ես յագեցութեան պատու մ'ունեցայ, ինչպէս գրեթէ ամենեքին կ'ունենան, վստիւրի ինչուան որոշեալ կէտ մը: Այն գողարըր գծից և գեղածիժազ գունոց անսպառելի յայտրուութիւնն կը պարտասեցընէ: Ազնուութեան և շնորհաց միակերպութիւն մ'է՝ յորում կը նիրհէ մըտածութիւնն: Ինչպէս տեսնել այն փանց միայն վրայ աճագին և անգեղեայ պարեխի մը յանկարծուտ ամբառնալը կամ նաւաղծութեան մը նյխարօք սփռուած՝ ամայի և տխրատեսիլ ծովափանց երկայնաձիգ միջոցի մը տուրածուիլը: Եւ այն առեն, զբաղելու համար ուրիշ բան չկոյ՝ բայց սեւեռել մըտաղբուրութեան ջրոց վրայ: Միայն նաւահանգիստ մը կը թուի վստիւրի կ'անցնիս օսմանեան տորմիլն մեծաչօք զբահապատ նաւուց քովէն. ամենայն աշխարհաց գունագոյն առազաստիք և նորաձև խելք վաճառակիր քաշտեաց նաւախմբին մէջէն, խոնեալ այլազգի ամբոխիւ. կը հանդիպին Սեաւ

ծովուն ասիական նաւահանդասոյ վա-  
ղընջենի ձեօք լաստափայտք, և Դես-  
պանութեանց փոքր շքեղ կորբասներ-  
նեօի պէս կ'անցնին աւագաց առա-  
գաստաւոր նաւակիկքն, որ միջմամբ  
կը թռչին, ափունքը շարուած հանդի-  
սատեսաց աչաց տակ. ամենազգի  
կուրք, ամենայն գունով մարդկամբ  
խոնեալ, կը բաժնուին կամ կը մօտե-  
նան երկուց աշխարհաց հազար փոքր  
նաւամաստացից. խիալարեալ նաւակիք  
կը վիտան վաճառարարձ կարկուրայից  
երկայն գծից մէջ. նաւաստեսաց դրօշա-  
կիր մակոյկք կը հանդիպին ձկնորաց  
լաստից, ֆաշայից ոսկեգօծ նաւակաց,  
կոստանդնուպօլսոյ շոգենաւուց, լցեալ  
փակիզներով, ֆէտերով և քօղերով, որ  
ծամամուռ կ'ընդմիջեն զլրանցքը՝ ամե-  
նայն կայարանից մօտենալու համար:  
Եւ որովհետեւ նաև մեր նաւն մանուածոյ  
չըլանօք յառաջ կ'երթայ, այսպէս այս  
բոլոր տեսարանն կարծես թէ մեր բռ-  
լորտիքը կը դառնայ, սարաւանդք կը  
սեղափոխին, բլուրք յանակնկալա ի-  
րենց կերպարանքը կը փոխեն, գիւղք  
կը թաքչին և ապա յերևան կու գան  
նոր հրեութիւնով մը, և մեր առջնն և յե-  
տակողմն, մերթ վոսփորն լճի մը պէս  
կը փակուի, մերթ կը բայուի և բացա-  
կայ լճաց և բլրոց կարգ մը կը ցուցնէ-  
ապա 'ի քթթեւ ական, յառաջայ և  
զկնի կը դառնան բլուրք միանալու, և  
կը մնաս կանանչ տաշտի մը մէջ, ուս-  
կից չես հասկընար ինչպէս պիտի ել-  
նես. բայց հազիւ ժամանակ կայ մեր-  
ձաւորի մը հետ տասն բառ խօսելու,  
որ արգէն տաշտն բացուած է, և չորս  
կողմը կը տեսնուին նոր բարձունք, նոր  
քաղաքք, նոր նաւակայանք:

Կառ 'ի խորշին թարապիա, — Դե-  
ղարան Մեղէայի թունոց —, և 'ի խոր-  
շին Հիւնքեար-իւքէլէօի, Սուլթանի  
սանդուղ, ուր ստորագրեցաւ 1833ին  
հռչակաւոր դաշնն՝ որ օտար նաւատոր-  
մին փակեց գլխարդանեայս: Հօս վոս-  
փորի տեսարանն իրեն գեղեցկութեան  
վերջնեթեր աստիճանին վրայ է. յետ

Պէջիլեք-տէրէի՝ իր ափունքը զարդարող  
քրտուրիկներուն մէջէն՝ թարապիա ա-  
մենէն պերճապոյձառն է, և Հիւնքեար-  
իւքէլէօի խորշին յետակողմը բացուած  
հովանն՝ ընդ մէջ Մարմարայի ծովուն  
և Սեաւ ծովուն ելած սքանչելագեղ  
հովտաց ամենէն դալարադուարճն, ա-  
մենէն սիրելագոյնն, ամենէն բանա-  
ստեղծականն է: Թարապիա մասամբ  
մը կը տարածուի ուղղորդ ափունքի մը  
վրայ, մեծ բլրոյ մը ստորոտը, և մա-  
սամբ մը խորափիտ ձոցոյ մը բողբոտի-  
քը, որ իր նաւակոյանն է, լցեալ նա-  
ւուք և նաւակօք, որու վրայ կը բերա-  
նանայ ֆրիօ-նէրոյ ձորակն, յորում  
քաղաքին ուրիշ մաս մը դալարեաց մէջ  
կը զօղի: Ծովափունքը բոլոր խոնեալ  
է նկարագեղ սրճարանօք, որ կը կար-  
կառին ջրոյն վրայ, փառաւոր պանդոկ-  
ներով, շքեղ տնակօք, վիթխարի ծա-  
ռոց խմբովք, որ կը հովանանան հրա-  
պարակիկներու և աղբերց վրայ. անոնց  
մէ անդին կը բարձրանան Գաղղիոյ, Ի-  
տալիոյ և Անգղիոյ Դեսպանութեանց  
ամարանոցք, և ասոնց վրայ, կայսերա-  
կան հովանոց մը. և բոլոր չորս կողմը,  
և ընդ բլուրն 'ի վեր, պատշգամբ պա-  
տըշգամաց վրայ, պարտէզք պարտի-  
զաց վրայ, ամարանոցք ամարանոցաց  
վրայ, անտառա՛ք անտառակաց վրայ.  
և կենդանի գոյներով զգեստաւորեալ  
ամբօրք կը գեռան 'ի սրճարանս, 'ի նա-  
ւահանդեսան, օփանց վրայ, 'ի վեր ընդ-  
ուղիս բարձանց, ինչպէս տօնախմբու-  
թիւն ընող փոքր մայրօքաղաքի մը մէջ:  
Ընդ հակառակն Ասիոյ կողմը բոլորովին  
խաղաղութիւն է: Հիւնքեար-իւքէլէօի  
փոքր գիւղն, կոստանդնուպօլսոյ հօյ  
ձօխից սիրելագոյն բնակավայր, կը նիւ-  
հէ սօսեաց և նսճեաց մէջ, իր պզտի  
նաւահանգստին բոլորտիքը, յորում  
կ'ընթանան սակաւաթիւ գողացիկ նա-  
ւակիկք. դեղէն անդին, պարտիզաց  
լայնատարր ասնգողոյ մը ծայրը, միայնիկ  
կ'ողորտանոյ Ապաիւլ-Ալիդի պերճ հո-  
վանոցն. և հովանոցէն անդին կը խո-  
տորի և կը թաքչի, արևագարձական  
բուսաբերութեան աննկարագրելի շքե-

դու թեան մը մէջ, փառելահնից սիրա-  
տենչակ հովիտան, պատարուն գաղտ-  
նեօք և երազովք :

Այլ մյոն մ'աւելի առաջ բոլոր այս  
գեղեցկութիւնն ոչինչ կ'երևի, երբ  
նաւն Պէօյիք-տէրէի ծոցոյն դիմաց կը  
հասնի, Հօս է վոսիւրոնի գերաբուն  
մեծ վայելչութիւնն և շնորհքն, Հօս ով  
որ արդէն յօգնած էր իր գեղեցկութե-  
նէն, և իր անունը անպատկառաբար  
արտասաներ էր, կը բանայ գլուխը, և  
անկէ թողութիւն կը ինդրէ: Հրաչա-  
լեօք բուրբեալ ընդարձակ լճի մը մէջ  
կաս, որ կը շնչէ գգազափարը սկսելու  
գառնալ, տէրվիչներու պէս, նաւուն  
առաջակողման վրայ, 'ի վայրկենի զա-  
մենայն ափունս և զամենայն բլուրս  
տեսնելու համար: Եւրոպիոյ եղբր վրայ,  
խոր ծոցոյ մը մէջ, ուր կ'երթայ նուա-  
զելու հասանքն հանդարտ անօք, մեծ  
բլրոյ մը ստորտն, անթիւ ամարոցնե-  
րով սփռուած, կը լայնի Պէօյիք-տէրէ  
քաղաքն, ընդարձակ, անեզր ծաղկանց  
ածուի մը պէս գունաւորեալ, բոլոր պա-  
լատիկը, հովանոցը և գեղակը դալա-  
րագեղ կանաչութեան մը մէջ խորա-  
սուզեալ, որ կարծես թէ կ'ենէ 'ի տա-  
նեաց և յորմոց, և կը լեցունէ զուզիս  
և զպալատս: Քաղաքն ամակողմը կը  
տարածուի ինչուան փոքր ծոցոյ մը մէջ,  
որ է իբրև խորշի մէջ խորշ մը, որու  
չորս կողմը կը պատի ֆէֆէլի-քէօյ դիւ-  
զըն. և ասոր յետակողմը լայն հովիտ  
մը կը բացուի, բուրբովին գալարազարդ  
մարգագեանովք, և տամբը՝ սպիտակա-  
թոյր, ուստի կ'երթաս 'ի մեծ յորմուղն  
Մահմուտի և յանտառն Պելիբատի:  
Այն հովիտն է, յորում ըստ ականգու-  
թեան, բանակեր է 1096ին առաջին  
Խաչակրաց ճամբարն. և յևոթն վիթ-  
խարի ստեանց մին, որով այն տեղն հրո-  
չակաւոր է, Պուլլիանեան կոիրեստսի  
սօսի կոչուած է: Քէֆէլի-քէօյէն ան-  
դին, ուրիշ խորշ մը կը բացուի, դալա-  
րացեալ նոճուովք և սպիտակացեալ  
տամբը, և խորշէն անդին դեռ կը տես-  
նուի Թարապիտ, իր մուկ կանաչ բլրոյն

ուղը ճապաղած: Հայեցուածով ին-  
չուան հօն հասնելէն ետքը, ետ կը դառ-  
նաս գէպ յԱխիա, և կը լցուիս մեծաւ  
զարմանալեօք: Վոսիորի բարձրագոյն  
լլրան՝ Հսկայի լերին առջին ես, կա-  
նաչ ահագին բրդան մը ձևով, ուր կոյ  
հուշակաւոր գերեզմանն, յերից առաւ  
պելեաց յորջորջեալ « անկողին Հե-  
սուկեայ, վիրապ Ամիկասի, շիրիմ Յե-  
սուկ պատարտի Եւրոպեոց »: այժ-  
միկ պահպանեալ յերկոց տէրվիչաց  
և յոյց ելեալ յախտածէս մահմետա-  
կանաց, որք կ'երթան հօն զետեղելու  
իրենց զգեստուց կոտորակքը: Լեռն իր  
անկախիտ և ծաղկաւէտ ստորտը կ'եր-  
կընցընէ մինչև ափունքը, ուր երկու  
գալարուտ սարաւանդից մէջ՝ կը բա-  
ցուի գեղեցիկ խորշն Ամուր-եէրի, հա-  
րիւր գոյներով խայտախարիւ եղած իր  
ծովեղբրաց վրայ ըստ կամի սփռեալ  
մահմետական գեղի մը տուներէն, ու-  
րուն ճամբայ կը բանան գեղակաց և  
տնակաց խումբեր, բացընկեցիկ ծաղ-  
կանց պէս ցանուած մարգագետնոց և  
մերձաւոր բարձանց վրայ: Այլ տես-  
բանն բոլոր այս պարունակին մէջ չէ:  
Ուղղորդ մեր այս դիմացը կը շողայ Սեաւ  
ծովն. և դառնալով դէպ 'ի կոստանդ-  
նուպօլիս, Թարապիտայէն անդին, մա-  
նուշակագոյն և խառնակ հեռաւորու-  
թեան մը մէջ գեռ կը տեսնուի Գա-  
լէնտէրի խորշն, Եէնի-քէօյ, յնճիր-  
քէօյ, Սուլթանիէ, որ ստոյգ երկոյթ-  
ներէ արելի, բացակայ աշխարհի մը  
երևակերպ տեսիլք կը թուին: Արևն կը  
մտնէ. Եւրոպիոյ ափունքն կապուտակ  
և մախրագոյն ստուերօք կը սկսանի քօյ-  
արկիլ: Ասիոյ ափունքն տակաւին ու-  
կեծմանն է. յուրքն կը փայտատակն.  
բազմութիւնք նաւակաց, խառնեալ ա-  
մանօք և սիրահարօք, վերագարձեալք  
'ի կոստանդնուպօլսոյ, կ'ընթանան դէպ  
յեզրն եւրոպական, հանդիպեալք, ար-  
գելեալք, պաշարեալք յայլոց նաւա-  
կաց, խճողելոց տիկնամբք և մանկամբք,  
որ կու գան 'ի գիւղից: Պէօյիք-տէրէի  
արձարաններէն կը հասնին առ մեզ ե-  
րաժշտութեանց և երգոց ընդհատ հըն.

չիւնք . արծիւք կը պարագային Հսկայի  
 լեռան վրայ, մարքերն կը թեւածեն ա-  
 փան երկայնութեամբ, ալիւրնք կը սա-  
 հին ջրոց վրայէն, զլիւնք կը վիտան  
 նաւուն չորս կողմը, Սեաւ ծովուն կով-  
 օջն մեր երեսը կը փէէ: Ո՛ր ե՛նք . ո՛ւր  
 կ'երթանք: Պատրանաց և արբեցու-  
 թեան վայրկեան մ'է, յորում երկու  
 ժամէ 'ի վեր վտափորի կրկին ափանց  
 վրայ ամենայն մեր տեսած բաներուն  
 յիշատակքն կը չփոթին 'ի միտս մեր՝  
 մի միայն հրաշակերտ քաղաքի մը պատ-  
 կերին մէջ, տանն անդամ մեծ քան ըզ-  
 կոստանդնուպոլիս, բնակեալ 'ի համ-  
 աշխարհի ժողովրդոց, զարդարեալ ա-  
 մենայն առանձնաշնորհութեամբք Աս-  
 տուծոյ, և անձնատուր մշտնջենաւոր  
 ուրախութեան մը, որ զմզ կը ընու-  
 տիրութեամբ և նախանձու:

Բայց այս՝ վերջին երազն է: Նաւն  
 արագապէս Պէօյիւք-տէրէի ծովէն 'ի  
 դուրս կ'ենէ: Կը տեսնենք ձախակողմը  
 շրջափակեալ 'ի գերեզմանատեղեաց  
 Սարը-եէր գիւղն, որուն գիմաց փոքր  
 խորշ մը կը բացուի, յորինեալ այն հին  
 Սիմասի հրուանդանէն, ուր կ'ամբառ-  
 նար պոռնիկ Աստղկան տաճարն, որու  
 մասնաոր զաշատն կը տաննին յոյննա-  
 ւալիւքը . ապա գիւղն Էէնի-Մահալէ .  
 ապա թելի-թապիտ բերդն, որ Հսկայի  
 լեռին ստորտը՝ ստիական ափան վրայ  
 կառուցեալ ուրիշ փոքր բերդի մը գի-  
 մաց կը կանգնի . յետոյ Բուժէլի-Գա-  
 վազ զղեակն, որ իր խիստ ծիրը վեր-  
 չալուսոյն յետին նշոյլներէն վարդա-  
 կարմիր երկնից վրայ կը գծէ: Միւս  
 ծովափան վրայ, հանդէպ Բուժէլի-Գա-  
 վազի, ուրիշ ամրոց մը կը բարձրանայ,  
 որ կը պսակէ սարաւանգը, ուր կ'ամ-  
 բառնար երկոստանն Գից տաճարն, յի-  
 նեալ 'ի փոխադոսն արդիացոյ, « յա-  
 ջողակ հողմոց բաշխոյ » Արամազդայ  
 տաճարին մօտ, հիմնարկեալ 'ի քաղ-  
 կեդոնացւոց, և ապա փոխեալ 'ի Յուս-  
 տինիանոսէ յեկեղեցի, նուիրեալ Մի-  
 քայելի հրեշտակապետին: Վոսփորի  
 վերջին անդամ՝ անձկացած կէտն է այն,

ընդ մէջ Բիւթանիոյ լեռանց վերջին  
 հանդիպադատոյն և Հեմոսի շղթա-  
 յին վերջին կէտին . ջրանցից միշտ իբ-  
 րև առաջին դուռն համարեալ, պաշտ-  
 ապանբու ընդդէմ Հիւսիսային արշաւա-  
 նաց, և յայն սակ թատր երկարատե  
 կուսոց բիւզանդացւոց և բարբարոսաց  
 մէջ, վենետիկացւոց և ճենովացւոց մէջ,  
 երկու ճենովացի զղեակք, մէկմէկու  
 դիմաց շինուած, որոց մէջ ձգուած էր  
 երկաթէ շղթայ մը՝ որ ջրանցքը կը փա-  
 կէր, դեռ հօն մօտ խառնիխուռն կը  
 ցուցընեն իրենց կործանեալ աշտարակ-  
 քը և պարիսպքը: Այն տեղէն վոսփոր  
 աստիճանաբար լայնելով կ'երթայ ու-  
 ղիղ 'ի ծով . երկու տիուռնքն բարձր և  
 դժուարեկանելի են, ինչպէս երկու ա-  
 հագին մարտկոցք, և միայն կ'երեկը-  
 նեն խումբ մը խեղճ տուներու, քանի  
 մը մենաւոր աշտարակ, քանի մը մե-  
 նաստանի աւերակ, քանի մը հին հոյա-  
 կապ շինուածոց և ամբարտակաց մնա-  
 ցորդ: Երկար ճանապարհորդութենէ  
 մ'ետքը, դեռ կը տեսնենք եւրոպական  
 ափան վրայ Պէօյիւք-Ղիմանի գեղջ լու-  
 սոց փայլփայլումը, և միւս կողմէն ամ-  
 բողի մը լապտերը, որ կ'իշխէ փոյի սա-  
 բաւանդին վրայ . ապա ձախակողմը  
 հին կիպոպոլոյ ժայռուտ մեծ զան-  
 գուածն, ուր կ'ամբառնար փրինէոսի պա-  
 լառն, հինահարեալ 'ի Հարպիսոյց . և  
 աշակողմը փոյրազ գլխոյն ամրոցն, որ  
 գորշագոյն երկնից վրայ իբրև աղօտ  
 սեւա բիծ մը մնզ կ'երևի: Հօս ափուռքն  
 ամենահեռի են . արդէն ջրանցքն մեծ  
 ծոց մը կը կարծուի . կ'իշխէ գիշերն,  
 ծովային սիւզն նաւուն պարանաց մէջ  
 կը հեծէ և տխուր կիւմներեան ճովն  
 կը տարածէ մեր առջևն իր կապարա-  
 գոյն և անհանդարտ անսահման հորի-  
 զոնը: Այլ տակաւին մտածութիւնն  
 չի կրնար տնջատել այն պատարուն բա-  
 նաստեղծութեամբ և յիշատակք ա-  
 փուռքէն, ոչ ևս այլ յաղթահարեալք  
 'ի գեղոյ բնութեան . և կը թռչի, ձա-  
 խակողմը, փոքր Պայքանաց ոտքը, աք-  
 սորեալ Ովիդիոսի աշտարակը փնտրա-  
 լու, և Անաստասիոսի զարմանալի պա-

րիսպքն. և կը թափառի, աչկողմը, հրաբլխային ընդարձակ երկրի մը մէջ, ի վարազուց և շնագոյլից ասպատակեալ անտառաց մէջ, վայրենի և անծանօթ ժողովրդեան մը սաղաւարաց մէջ, որոն կարծես թէ այլանդակ ստուերը կը տեսնենք բարձր ափան վրոյ, որ կը մաղթեն մեզ չարաբաստիկ ճանապարհորդութիւն մ'ի վերայ վայրենի ափանց Պոնտոսի: Երկու լուսաւոր կէտք վերջին անգամ մթութիւնը կը խորտակեն, երկու կիկլոպոյց բոցավառ աչաց պէս, կախարդեալ նեղուցին պահապան դրուած, Մնատուր-Ֆէնէր՝ Ասիոյ լապտերն՝ յափկողմն. և բումէլի-Ֆէնէր՝ ի ձախակողմն. որոց ոտքը առասպելական Միմրէկատեանը՝ ափանց ստուերին մէջ դեռ կը ցուցնեն մեզ ընդ ազօտ իրենց կոչկոճեալ ժայռից կողմնակի անսխըր՝ Ապա Եւրոպէի և Ասիոյ երկու ափունքն ուրիշ բան չեն՝ բայց երկու թուխ գիծեր. և ապա ուր և Ուայիցիս, ոչ այլ ինչ է՝ բայց ճով և օդ, ինչպէս կ'երգէր խեղճ Ովի-

դիոս: Բայց դեռ զայն կը տեսնեմ, իմ կոստանդնուպօլիսս, այն աներևութացեալ կրկին ափանց ետեը. կը տեսնեմ զայն աւելի մեծ և աւելի լուսափայլ քան զոր երբեք տեսած ըլլայի Վալիտէ Սուլթանին կամրջէն և ի բարձանց Խակիւտարի, և կը խօսիմ առ նա և կ'ողջունեմ զնա և կը պաշտեմ զայն իբրև իմ երիտասարդութեանս՝ որ մայրը կը մանէ՝ վերջին և սիրելագոյն երազն, Բայց աղային շրոյ յանկարծակի սըրսկում մը կը ցնցղկէ երեսս և գլխարկս գետին կը նետէ. — կը զարթնում. — չորս կողմն կը նայիմ. — նաւուն առաջքն անապատ է, երկինքն մառախլաւի է, աշնանային ցուրտ հողմ մը ուկերքս կը ստուեցնէ. իմ բարի եունքս, ժովխտակն բռնուելով՝ զիս թողուցուրիշ բան չեմ լսեր բայց լապտերաց զօղանջիւնը և նաւուն ճունչելը, որ կը փակչի՝ որորերով յալեաց, գիշերոյ մթութեան մէջ. . . . իմ արեւելից գեղեցիկ երազս ընցաւ:

Վ Ե Բ Ձ

Ն Ի Ո Ւ Ե Օ Ր Ք Հ Է Ր Ա Լ Տ

Ա Ղ Խ Ա Ր Ո Ւ Խ Ա մ և ճ ա գ ոյ ն օ թ ա գ ի Ր ն ւ :

Կիսադարեան կեանք ունի. հիմնադիրն է Ճէյմս Կորտոմ՝ Պէմնէզ: Նախ օրը եօթն կամ ութ հարիւր օրինակ կը հրատարակէր. այսօր քսանի մը հարիւր հազարներ կը հանէ: Երբ առաջին անգամ հրատարակուեցաւ, խեղճ բան մը էր, համառօտ նիւթեր պարունակելուն համար. կը բովանդակէր կարճ ինքնադիր դրուածք մը, եւրոպական լրոց համառօտութիւն մը, զորոնք առաջաւտաւոր նաւերով եկած սահաւաթիւ լրագիրներէ կը քաղէր, և յետոյ մէկ քանի տող զանազան տեղեկութիւններէ զատ ուրիշ բան չկար:

Ինչպէս կը տեսնենք, պէտք էր զայն կարգաւորել: Պէմնէզ որ միշտ գլխաւոր խմբագիր եղաւ, տեղական օրագրութիւններ սկսաւ ընել. և որովհետև յԱմերիկայ վաճառականութիւնն կարգէ գուրս զարգացած էր՝ դէմ դնելով հին Եւրոպիոյ, հարկ եղաւ որ ամեն օր ելլամից յողուած մը հրատարակուի: Լրագիրն միշտ կը յառաջանար և զգալի կերպով օրինակք կ'աճէին:

Պէմնէզ յԵւրոպիոյ եկած լրագրոց թերթերը աւելի շուտ ընդունելու համար՝ նաւակներ գնեց, սրանք ընդ առաջ երթալով նաւերուն՝ օտար լրա-